ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

31.08.2021թ. թիվ 1 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուս. տարվա պատասխանատուների հաստատում:
2. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
3. Թեզերի, ավարտական աշխատանքների և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում:
4. Զինվորի տուն կազմակերպության հետ համագործակցություն:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ- 2021-2022 ուս. տարվա պատասխանատուների հաստատման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը ներկայացրեց պատասխանատուների հետևյալ կազմը՝

1-ին կուրս- Կարապետյան Սիրարփի (անգլիական), Աթոյան Կարինե (գերմանական)

2-րդ կուրս- Բաղդասարյան Սուսաննա (անգլիական), Աթոյան Կարինե (գերմանական), Աղաջանյան Զարուհի (իսպանական)

3-րդ կուրս- Ասատրյան Ռուզաննա (անգլիական), Ղազարյան Լիլիյա (գերմանական)

4-րդ կուրս- Սարգսյան Սաթենիկ (անգլիական), Սավոյան Գայանե (գերմանական)

Մագ. 1-ին կուրս- Մելիքյան Գոհար (անգլիական), Սավոյան Գայանե (գերմանական)

Մագ. 2-րդ կուրս- Մխիթարյան Ելենա (անգլիական), Սավոյան Գայանե (գերմանական)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը և Ն. Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Հաստատել 2021-2022 ուս. տարվա պատասխանատուներին:

2.ԼՍԵՑԻՆ- Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը ներկայացրեց 2021-2022 ուս. տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները և հայտնեց դասախոսներին, որ դրանք պետք է տեղադրվեն Google Classroom էլեկտրոնային հարթակի դասընթացների համապատասխան պանակներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. թ.,դոցենտ Ս. Լուլուկյանը և բ. գ. թ., դոցենտ դոցենտ Ա. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

3.ԼՍԵՑԻՆ- Թեզերի, ավարտական աշխատանքների և կուրսային աշխատանքների թեմաների քննարկման հարցը:

Դասախոսները ներկայացրին թեզերի, ավարտական աշխատանքների և կուրսային աշխատանքների թեմաները և քննարկումների արդյունքում շտկվեցին դրանք: Բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց դասախոսներին, որ 1 շաբաթվա ընթացքում պետք է ամբիոն ներկայացնել աշխատանքների թեմաները և պլանը: Տ. Միքայելյանը հորդորեց դասախոսներին, որ թեմաները լինեն հստակ, վերլուծական և ուշադրություն դարձնեն մեթոդական հատվածին: Միքայելյանը մագիստրատուրա 1-ին կուրսի թեմաների հավաքագրման պատասխանատու նշանակեց բ. գ. թ., դոցենտ Գ. Մելիքյանին, իսկ բակալավր 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի պատասխանատու նշանակեց դասախոս Ս. Սարգսյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, մ. գ. թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ. գ. թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Մելիքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Թեզերի, ավարտական աշխատանքների և կուրսային աշխատանքների թեմաների քննարկման հարցը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ- Զինվորի տուն կազմակերպության հետ համագործակցության հարցը:

Բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց դասախոսներին, որ պետք է իրականացվեն ուսումնական աշխատանքներ և կազմակերպվեն դասընթացներ վիրավոր զինվորների համար: Գործընթացի համակարգման պատասխանատու նշանակվեց դասախոս Ն. Հայրապետյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, դասախոսներ Ս. Սարգսյանը և Ն. Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Զինվորի տուն կազմակերպության հետ համագործակցության հարցը համարել բավարար:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

24.09.2021թ. թիվ 2 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի, առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում:

2.Հերթապահության գրաֆիկի հաստատում:

3. Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքի քննարկում:

4. Ս. Կարապետյանի «Անվանական հիմքով բաղադրությունների ուսուցումը անգլերենում և հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ- Մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի, առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը ներկայացրեց մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի, առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախորոք տրամադրված թեմաները: Քննարկումների արդյունքում թեմաները շտկվեցին և ձևափոխվեցին, այնուհետև հաստավեցին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, բ. գ. թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, մ. գ. թ., պրոֆեսոր Կ. Հայրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի, առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաները:

2.ԼՍԵՑԻՆ- Հերթապահության գրաֆիկի հաստատման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը ներկայացրեց հերթապահության հետևյալ գրաֆիկը.

1/ 3 շաբաթ	
Օր	Դասախոս
Երկուշաբթի	Հովհաննիսյան Գայանե
Երեքշաբթի	Սահակյան Անի
Չորեքշաբթի	Բաղդասարյան Սուսաննա

Հինգշաբթի	Ղազարյան Լիլիյա
Ուրբաթ	Պետրոսյան Ամալյա
2/ 4շաբաթ	
Երկուշաբթի	Կարապետյան Սիրարփի
Երեքշաբթի	Հայրապետյան Նուշիկ
Չորեքշաբթի	Սավոյան Գայանե
Հինգշաբթի	Սարգսյան Սաթենիկ
Ուրբաթ	Խաչատրյան Ռուզան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Սահակյանը և դասախոս Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հերթապահության գրաֆիկը:

3.ԼՍԵՑԻՆ – Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքի քննարկման հարցը:

Դասախոսները ներկայացրին հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, մ.գ.թ, դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը և մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Google Classroom էլեկտրոնային հարթակում կատարված աշխատանքի քննարկման հարցը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ – Ս. Կարապետյանի «Անվանական հիմքով բաղադրությունների ուսուցումը անգլերենում և հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, մ. գ. թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ. գ. թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Մելիքյանը:

Նշվեց, որ ձեռնարկը գրված է նյութի լիարժեք իմացությամբ. այն գիտական առումով հաջողված է, ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն: Աշխատանքը բաղկացած է երեք գլխից, գրված է հստակ շարադրանքով և պարզ վերլուծությամբ: Կազմված տարատեսակ առաջադրանքների միջոցով հեղինակը ուսանողներին է մատուցում անվանական հիմքով համադրական և վերլուծական բաղադրություններին վերաբերող նյութը զուգադրվող լեզուներում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ս. Կարապետյանի «Անվանական հիմքով բաղադրությունների ուսուցումը անգլերենում և հայերենում» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

22.11.2021թ. թիվ 3 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրոսական թեզերի ամսեկան քննարկման ժամկետները։

2. Մանկավարժական պրակտիկային առնչվող հարցեր /զեկուցող մ.գ.թ, դոցենտ Ա. Մանուկյան/

3. Թ. Մաթևոսյանի «Միջմշակութային հաղորդակցություն. դասավանդման մեթոդիկան ֆիլմի հիման վրա» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը։

3. Ընթացիկ հարցեր։

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ - Մագիստրոսական թեզերի ամսեկան քննարկման ժամկետների քննարկման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց, որ մագիստրոսական թեզերի քննարկումը տեղի կունենա նոյեմբերի 28-ին ժամը 16:30-ին: Տ. Միքայելյանը նշեց, որ քննարկման նպատակն է պարզաբանել առկա խնդիրները և հստակեցնել հետագա աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Կ. Հայրյանը, բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Սավոյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Մագիստրոսական թեզերի ամսեկան քննարկման ժամկետների քննարկման հարցը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկային առնչվող հարցերը: Պրակտիկայի ղեկավար մ.գ.թ, դոցենտ Ա. Մանուկյանը հատուկ շնորհակալություն հայտնեց դասախոսներ Ս. Կարապետյանին և Ն. Հայրապետյանին, որոնց անմիջական ղեկավարությամբ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողները անցկացրել էին շատ արդյունավետ մանկավարժահետազոտական պրակտիկա: Պրակտիկայի ղեկավար Ա. Մանուկյանը նշեց նաև, որ մեթոդիստների պրակտիկայի էլեկտրոնային հարթակում թղթապանակներ տեղադրված չեն: Ա. Մանուկյանը նաև հորդորեց թեզերի ղեկավարներին, որ ուսանողներին գնահատելուց առաջ խորհրդակցեն Ս. Կարապետյանի և Ն. Հայրապետյանի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, մ.գ.դ. պրոֆեսոր Մ.Աստվածատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ծ. Շահիրյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Կ. Հայրյանը, մ.գ.թ. դոցենտ Ա. Մանուկյանը, բ.գ.թ Ս. Կարապետյանը և դասախոս Ն. Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկային առնչվող հարցերը համարել բավարար:

3.ԼՍԵՑԻՆ – Թ. Մաթևոսյանի «Միջմշակութային հաղորդակցություն. դասավանդման մեթոդիկան ֆիլմի հիման վրա» ուսումնամեթոդական ձեռնարկի քննարկման և տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ. գ. դ., պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, մ. գ. թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ. գ. թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Մելիքյանը:

Նշվեց, որ ձեռնարկի հեղինակը միջմշակութային հաղորդակցության դասավանդման խնդրի լավագույն լուծում է առաջարկում ֆիլմի և այլ տեսամիջոցների կիրառումը: Ձեռնարկը կարող ծառայել է որպես անհրաժեշտ և տվյալ ուսումնական գործընթացի համար շատ կարևոր գործնական ուղեցույց:

ՈՐՈՇԵՑԻՆ – Թ. Մաթևոսյանի «Միջմշակութային հաղորդակցություն. դասավանդման մեթոդիկան ֆիլմի հիման վրա» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

29.11.2021թ. թիվ 4 արտահերթ նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Սիրարփի Կարապետյանի «Օտար բառերի հայրենացումը և ուսուցումը բուհում» հոդվածի քննարկում և երաշխավորում:
2. Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ - Սիրարփի Կարապետյանի «Օտար բառերի հայերենացումը և ուսուցումը բուհում» հոդվածի քննարկման տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սիրարփի Կարապետյանի «Օտար բառերի հայերենացումը և ուսուցումը բուհում» հոդվածը երաշխավորել տպագրության:

2.ԼՍԵՑԻՆ-Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքների ամփոփման հարցը:

Տ. Միքայելյանը նշեց, որ ըստ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունների՝ արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են: Հաշվետվությունների արդյունքում պարզաբանվել են առկա խնդիրները և հստակեցվել հետագա աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Կ. Հայրյանը, բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը և մ.գ.թ. դոցենտ Ծ. Շահիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի հաշվետվությունների արդյունքների ամփոփման հարցը համարել բավարար:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

06.12.2021թ. թիվ 5 արտահերթ նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ներքոհիշյալ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Լուսինե Ասատրյան
Ստեփան Գրաբսկի
Մանե Խաչիբաբյան
Լուսինե Միրզոյան
Տաթևիկ Զարգարյան
Լուսինե Մադաթյան
Գոհար Ամայան
Էլեն Ավետիսյան
Աննա Գույումջյան
Նարինե Ներսիսյան

2. Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Լուսինե Միրզոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխություն:

3.Իսպաներեն լեզու և գրականություն բաժնի ուսումնական պլանի մեջ փոփոխություններ կատարելու նախագծի քննարկում և հաստատում:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ -Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ներքոհիշյալ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Լուսինե Ասատրյան
Ստեփան Գրաբսկի
Մանե Խաչիբաբյան
Լուսինե Միրզոյան
Տաթևիկ Զարգարյան
Լուսինե Մադաթյան
Գոհար Ամայան
Էլեն Ավետիսյան
Աննա Գույումջյան
Նարինե Ներսիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Կ. Հայրյանը, բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ ——ատեստավորել Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտներ և հայցորդներ Լուսինե Ասատրյանին, Ստեփան Գրաբսկիին, Մանե Խաչիբաբյանին, Լուսինե Միրզոյանին, Տաթևիկ Զարգարյանին, Լուսինե Մադաթյանին, Գոհար Ամայանին, Էլեն Ավետիսյանին, Աննա Գույումջյանին և Նարինե Ներսիսյանին:

2.ԼՍԵՑԻՆ -Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Լուսինե Միրզոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, բ. գ. դ. պրոֆեսոր Կ. Հայրյանը, բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Լուսինե Միրզոյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերնագրով՝ «Դարձվածքների առցանց ուսուցումը՝ որպես լեզվամշակութային կոմպետենցիայի զարգացման միջոց անգլերենի ոչ մասնագիտական դասընթացում»:

3.ԼՍԵՑԻՆ -Իսպաներեն լեզու և գրականություն բաժնի ուսումնական պլանի մեջ փոփոխություններ կատարելու նախագծի քննարկման և հաստատման հարցը:

Առաջարկվեց հետևյալ նախագիծը.

Իսպաներեն ոչ մանկավարժական պլանի նախագիծ

Ներկայում գործող	Առաջարկ-վող	2 միջ. ամփոփիչ ստուգմամբ	2 միջ. առանց ամփոփիչ ստուգման	1 միջ. 1 ամփոփիչ ստուգմամբ	ամփոփիչ ստուգում առանց միջանկյալների	ընդամենը	լսարանային	դասախոսություն	գործնական	ինքնուրույն աշխ.	կրեդիտ	շաբաթական ծանր.
3-րդ կուրս 1-ին կիսամյակ												
Կուրսային աշխատանք (մեթոդիկա)	Կուրսային աշխատանք (գրականություն)				x	60				60	2	
Մանկավարժական պրակտիկա	Գրական տեքստի լեզվաբանական ուսումնասիրություն				x	90					3	4

3-րդ կուրս 2-րդ կիսամյակ												
Ընտրովի դասընթաց* 1 ՄՀ-ից	Գրականությունը և արվեստի այլ ճյուղերը				x	60	18	14	4	42	2	2
Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա	Իսպանախոս ՋԼՄ-ների լեզու			x		60	18	12	6	42	2	2
Մանկավարժական պրակտիկա	իսպաներեն լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցում					180					6	
4-րդ կուրս 1-ին կիսամյակ												
Մանկավարժական պրակտիկա (6)	մասնագիտական հետազետական պրակտիկա				x	60					2	

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը և դասախոս Ջ. Աղաջանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել իսպաներեն լեզու և գրականություն բաժնի ուսումնական պլանի մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը և այն ներկայացնել ֆակուլտետի խորհրդին:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

29.12.2021թ. թիվ 6 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների արդյունքների քննարկում և ամփոփում:
2. Մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
3. ՀՊՄՀ-ի 100 ամյակի կապակցությամբ միջոցառումների պլանի քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ- 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների արդյունքների քննարկման և ամփոփման հարցը:

1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների արդյունքների վերաբերյալ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները հաշվետվություններ ներկայացրեցին, համաձայն որոնց գրեթե բոլոր կուրսերում արդյունքները բավարար են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը, դասախոսներ՝ Լ. Ղազարյանը և Գ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների արդյունքների քննարկման և ամփոփման հարցը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Հաշվետվություն մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը նշեց, որ մագիստրատուրա 2-րդ կուրսի թեզերի և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների արդյունքները բավականին գոհացուցիչ են: Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց, որ հաջորդ ամիս տեղի կունենա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների քննարկում, որի նպատակն է պարզաբանել առկա խնդիրները և հստակեցնել հետագա աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների և բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ-3. ՀՊՄՀ-ի 100 ամյակի կապակցությամբ միջոցառումների պլանի քննարկման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը ներկայացրեց ՀՊՄՀ հարյուրամյակի կապակցությամբ առաջարկվող միջոցառումների հետևյալ տեսակները՝

Հաշվի առնելով մեր ԲՈՒՀ-ի առանձնահատկությունները՝ հաստատության կողմից ստանձնած հասարակական պարտավարությունների հարացույցին համահունչ և ի հաստատում Մանկավարժական համալսարանի համապատասխան հասարակական առաքելությանը, կարծում ենք, որ հարյուրամյակին ընդառաջ հնարավոր և անհրաժեշտ է արարողակարգային-տոնական նախաձեռնություններից զատ կազմակերպել միջոցառումների հետևյալ տեսակները.

Մանկավարժամեթոդական՝ առաջատար և նորարարական փորձի փոխանակման, փաստացի մանկավարամեթոդական աջակցության տրամադրման նպատակով: Հնարավոր ձևաչափերն են՝ ***վարպետաց դաս***՝ դպրոցական ծրագրով սահմանված առարկաների ուսուցիչների ներգրավվածությամբ՝ որպես համահեղինակներ և/կամ դիտորդներ, ***բաց ձևաչափով/ կլոր սեղան/ստեղծագործական քննարկումներ***՝ սահմանված մանկավարժամեթոդական թեմաներով, **լավագույն դաս** նախաձեռնություն, որի մասին առաջարկում ենք տարածել հայտարարություն՝ ամբիոնների մասնագետների կողմից դասի դիտարկման և լավագույն դասի հետագա պարգևատրմամբ:

Գիտամեթոդական՝ ***մագիստրոսների*** **և** ***գործող ուսուցիչների*** **զեկույցների բանավոր ներկայացմամբ՝ հետագայում «Էլեկտրոնային ամսագիր» ձևաչափով** հրապարակման նպատակով: Ցանկալի է, որ մագիստրոսը և իր առարկայի ուսուցիչը պատրաստեն իրենց զեկույցը համատեղ և հրապարակեն այն՝ համահեղինակությամբ: ***«Լավագույն տասնյակ» հոդվածների ժողովածուի հրապարակում***՝ հարյուրամյակի կապակցությամբ: Ամսագրում ենթակա են տպագրության մագիստրոսական թեզերի հիման վրա հոդվածներ, որոնք պետք է նախապես երաշխավորվեն ֆակուլտետի խորհրդի կողմից:

Այլընտրանքային դասավանդման փորձ՝ ներառելով ՀՊՄՀ պատմության թանգարանը և/կամ այլ թանգարաններ, ցուցասրահներ և այլն:

Միջառարկայական դասավանդում՝ միջամբիոնական և/կամ միջֆակուլտետային նախաձեռնություններով: Հնարավոր ձևաչափերից կարող է լինել ***պրոյեկտային ուսուցումը***, որը պետք է ներառի առնվազն երկու մասնագետ և երկու ակադեմիական խումբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը, մ.գ.թ. դոցենտ Ծ. Շահիրյանը և բ.գ.թ. դոցենտ Կ. Աթոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ-ի 100 ամյակի կապակցությամբ միջոցառումների պլանի քննարկման հարցը համարել բավարար:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 02.02.2022թ. թիվ 7 արտահերթ նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Գրիշա Գագիկի Գասպարյանի «Անգլերեն տեքստային որմնագրությունը որպես զանգվածային հաղորդակցության մոդել» թեմայով ատենախոսության մասին կարծիքի քննարկում և հաստատում:

2.Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

ԼՍԵՑԻՆ- Գրիշա Գագիկի Գասպարյանի «Անգլերեն տեքստային որմնագրությունը որպես զանգվածային հաղորդակցության մոդել» թեմայով ատենախոսության մասին կարծիքի քննարկման և հաստատման հարցը:

Բ.գ.թ. Ս. Կարապետյանը և բ.գ.թ, դոցենտ Ռ. Ասատրյանը ընթերցեցին ատենախոսության մասին կարծիքները, նշվեցինին առավելությունները և թերությունները, սակայն նշվեց, որ թերությունները որակապես չեն ազդում ատենախոսության ընդհանուր արժեքի վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանը , բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ռ. Ասատրյանը և բ. գ. թ. Ս. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջնորդել ԵՊՀ-ի գիտական աստիճաններ շնորհող 009 մասնագիտական խորհրդին Գրիշա Գագիկի Գասպարյանին շնորհել ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 18.02.2022թ. թիվ 8 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների, առկա բակալավր 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների քննարկում:
2. Մերի Սամվելի Եսայանի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման ռազմավարությունը» (ֆիզիկայի ենթալեզվի օրինակով) ատենախոսության նախապաշտպանություն:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ- Մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների, առկա բակալավր 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների քննարկման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը նշեց, որ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների աշխանատնքները բավալանին լավ վիճակում են և ուսանողները հստակ պատկերացնում են, թե որն է իրենց հաջորդ քայլը: Տ. Միքայելյանը հատուկ շնորհակալություն հայտնեց մ.գ.թ, դոցենտ Ա. Մանուկյանին՝ ուսանողներին օժանդակելու համար թե ինչպես ճիշտ ձևավորել մեթոդական հատվածը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հանձնարարեց բ.գ.թ Ս. Կարապետյանին և դասախոս Ս. Սարգսյանին քննարկում կազմակերպել առկա բակալավր 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ուսանողների հետ և կանոնավորել ավարտական աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ.գ.թ, դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ, դոցենտ Ծ. Շահիրյանը , բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ Ս. Կարապետյանը և դասախոս Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մագիստրատուրա 2-րդ կուրսի հետազոտական աշխատանքների, առկա բակալավր 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների քննարկման հարցը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ- Մերի Սամվելի Եսայանի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման ռազմավարությունը» (ֆիզիկայի ենթալեզվի օրինակով) ատենախոսության նախապաշտպանությունը:

Մ.գ.թ. Ա. Պետրոսյանը և մ.գ.թ, դոցենտ Ծ. Շահիրյանը ներկայացրին ատենախոսության վերաբերյալ գրավոր կարծիքները՝ նշելով առավելությունները և թերությունները, փաստելով, որ թերությունները որակապես չեն ազդում ատենախոսության ընդհանուր արժեքի վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ.գ.դ, պրոֆեսոր Մ. Աստվածատրյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ.գ.դ, պրոֆեսոր Ի. Կարապետյանը, մ.գ.թ. Ա. Պետրոսյանը, մ.գ.թ, դոցենտ Ծ. Շահիրյանը և բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մերի Սամվելի Եսայանի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման ռազմավարությունը» (ֆիզիկայի ենթալեզվի օրինակով) ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդում:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 08.04.2022թ. թիվ 9 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՊՄՀ գործունեության վերաբերյալ իրազեկման արշավի կազմակերպում:

2. ՀՊՄՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների կազմակերպում:

3. Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:

4. Բանասիրական գիտությունների թեկնածու, ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Սիրարփի Հովիկի Կարապետյանին Ժ. 02. 00 - «Լեզվաբանություն» մասնագիտությամբ դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին մասնակցելու երաշխավորություն տալու հարցը:

5.Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը

1.ԼՍԵՑԻՆ- ՀՊՄՀ գործունեության վերաբերյալ իրազեկման արշավի կազմակերպման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը նշեց, որ ՀՊՄՀ գործունեության վերաբերյալ իրազեկման արշավի կազմակերպումը պետք է սկսել դպրոցներ այցելելուց և համալսարանը սոց. ցանցերում գովազդելուց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, մ.գ.թ, դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ, դոցենտ Ծ. Շահիրյանը , բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ Ս. Կարապետյանը և դասախոս Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- ՀՊՄՀ գործունեության վերաբերյալ իրազեկման արշավի կազմակերպման հարցը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ-ՀՊՄՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հանձնարարեց դասախոսներին, որ 1 շաբաթում ներկայացնեն ՀՊՄՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- ՀՊՄՀ հարյուրամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման հարցը համարել բավարար:

3.ԼՍԵՑԻՆ-Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը հայտնեց, որ մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը տեղի կունենա ապրիլի 22-ին, ժամը՝ 16.00-ին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ. դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ. Ս. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. դոցենտ Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության հարցը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ – Բանասիրական գիտությունների թեկնածու, ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Սիրարփի Հովիկի Կարապետյանին Ժ. 02. 00 - «Լեզվաբանություն» մասնագիտությամբ դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին մասնակցելու երաշխավորություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ. գ. թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, մ. գ. թ., պրոֆեսոր Կ. Հայրյանը, դոցենտներ Գ. Մելիքյանը, Ա. Սահակյանը, Ռ. Ասատրյանը, Ս. Բաղդասարյանը, Ռ. Խաչատրյանը, Ծ. Շահիրյանը:

Նշվեց, որ բ. գ. թ. Սիրարփի Կարապետյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2016 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Գոյականական հիմքերով բաղադրությունները հայերենի և անգլերենի բառակազմական համակարգում» թեմայով: Ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է գիտական մի շարք հոդվածներ, իսկ 2022 թ.՝ ուսումնամեթոդական ձեռնարկ (ցանկը՝ կից):

2013 թվականից ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի դասախոս է. դասավանդում է «Ռոմանագերմանական լեզուների ներածություն», «Տեսական և գործնական թարգմանություն», «Բառագիտություն», «Անգլերենի բանավոր հաղորդակցում», «Անգլերենի գրավոր հաղորդակցում», «Անգլերենի գործնական քերականություն» առարկաները:

Ներկայացված փաստաթղթերը բավարարում են ՀՀ կառավարության 17.02.2022 թ. N 177-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 5-րդ կետի «2» ենթակետի պահանջները. սա հիմք է տալիս երաշխավորելու Սիրարփի Կարապետյանին՝ մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, բ. գ. թ. Սիրարփի Կարապետյանին թույլատրել մասնակցելու Ժ. 02. 00 «Լեզվաբանություն» մասնագիտությամբ դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին:

2. Խնդրել ֆակուլտետի խորհրդին հաստատել ամբիոնի որոշումը:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Տ. Բ. Միքայելյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 10.05.2022թ. թիվ 10 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Գոհար Մելիքյանի՝ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պաշտոնում հրամանագրվելու հարցը:

2.Սիրարփի Կարապետյանի՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության երիտասարդ գիտնականների համար հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին երաշխավորման հարցը:

3.Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը

1.ԼՍԵՑԻՆ - Գոհար Մելիքյանի՝ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պաշտոնում հրամանագրվելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել Գոհար Մելիքյանի՝ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պաշտոնում հրամանագրվելու հարցը:

2.ԼՍԵՑԻՆ - Սիրարփի Կարապետյանի՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության երիտասարդ գիտնականների համար հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը և մ.գ.թ. Թ. Մաթևոսյանը:

Նշվեց, որ Սիրարփի Կարապետյանը մրցույթին ներկայացրել է 2020-2022թթ. տպագրված գիտական հոդվածների ցանկը և նրա տարիքը համապատասխանում է վերոնշյալ մրցույթի պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել Սիրարփի Կարապետյանի՝ «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին իր աշխատանքը ներկայացնելու արժանիության վերաբերյալ հարցը:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝

Գ. Է. Մելիքյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի 28.06.2022թ. թիվ 11 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1.Ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

2.2021/2022 ուսումնական տարվա դասախոսական անձնակազմի հաշվետվություն:

3.2022/2023 ուս. տարվա դասախոսների անհատական պլանի ներկայացում:

4.2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

5.Վերապատրաստումների ամփոփում: Առարկայական նկարագրերի և ՄԿԾ-ների համապատասխանեցում նոր պահանջներին:

6. Ընթացիկ հարցեր:

Սեմինար

Թեմա՝ «Ժամանակակից դասավանդման մեթոդները և հետազոտական աշխատանքների ձևաչափերը ԱՄՆ բուհական համակարգում»

Զեկուցող՝ ԱՄՆ Հյուսթոնի համալսարանի պրոֆեսոր Ստելլա Գրիգորյան

Նիստը վարեց ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը

1.ԼՍԵՑԻՆ - Ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը նշեց, որ ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների բավականին հաջող էին և ուսանողները կարողացան պատշաճ կերպով ներկայացնել կատարված աշխատանքները: Գ. Միքայելյանը ընթերցեց ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Ա. Ջիվանյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը և բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ավարտական ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփման հարցը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ- 2021/2022 ուսումնական տարվա դասախոսական անձնակազմի հաշվետվության հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց դասախոսներին, որ 1 շաբաթվա ընթացքում ամբիոն ուղարկեն 2021/2022 ուսումնական տարվա դասախոսական անձնակազմի հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ն. Հայրապետյանը և Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –2021/2022 ուսումնական տարվա դասախոսական անձնակազմի հաշվետվության հարցը համարել բավարար:

3.ԼՍԵՑԻՆ- 2022/2023 ուս. տարվա դասախոսների անհատական պլանի ներկայացման հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց դասախոսներին, որ 1 շաբաթվա ընթացքում ամբիոն ուղարկեն 2022/2023 ուս. տարվա դասախոսների անհատական պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ն. Հայրապետյանը և Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –2022/2023 ուս. տարվա դասախոսների անհատական պլանի ներկայացման հարցը համարել բավարար:

4.ԼՍԵՑԻՆ- 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման հարցը:

Դասախոսները ներկայացրին տեղեկատվություն ուսանողների վերջնական գնահատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ն. Հայրապետյանը և Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման հարցը համարել բավարար:

5.ԼՍԵՑԻՆ- Վերապատրաստումների ամփոփումների, առարկայական նկարագրերի և ՄԿԾ-ների համապատասխանեցման նոր պահանջների հարցը:

Բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանը հայտնեց դասախոսներին, որ օգոստոս ամսվա վերջին պետք է ամբիոն ներկայացնել վերանայված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սահակյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանը, դասախոսներ Ն. Հայրապետյանը և Ռ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերապատրաստումների ամփոփումների, առարկայական նկարագրերի և ՄԿԾ-ների համապատասխանեցման նոր պահանջների հարցը համարել բավարար:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝

Գ. Է. Մելիքյան

Նիստի քարտուղար՝ Է. Վ. Բաբիկյան